

Դաս 4. Որակական հետազոտության մեթոդներ

Նարատիվ

Այս դասի ավարտին ուսանողները կգիտենան.

- ի՞նչ է նշանակում «որակական հետազոտության մեթոդներ», և ինչո՞վ են դրանք տարբերվում «քանակական հետազոտության մեթոդներից»:
- ինչպե՞ս են որակական մեթոդներն օգտագործվում պլանավորման մեջ:
- որո՞նք են որակական տեղեկատվություն հավաքելու գլխավոր եղանակները (դրանց առավելություններն ու թերությունները):

Որակական հետազոտությունը նախաձրագրված (formative) հետազոտության տեսակ է, որը ձգտում է հասկանալ մարդկային վարքագծի *իմաստը* և հասարակական փոխհարաբերությունների սոցիալ-մշակութային համապետքաբը: Որակական հետազոտությունը հնարավորություն է տալիս ներթափանցել թիրախ-բնակչության ապրելակերպի, համոզմունքների, դրդապատճառների և վարքագծերի մեջ: Նենց իր բնույթով պայմանավորված՝ այս հետազոտությունը գործ ունի մարդու գոյության զգացմունքային և միջավայրային (կոնտեքստային) երևույթների, այլ ոչ թե առարկայական, չափելի վարքագծերի և կեցվածքների հետ: Այն անց է կացվում «ինչո՞ւ» հարցին (այլ ոչ թե՝ «քանի՞ հար» կամ «որքա՞ն հաճախ» հարցերին) պատասխան գտնելու համար: Որակական հետազոտությունը կիրառվում է բացահայտման, այլ ոչ թե ապացուցման նպատակով: Այն սովորաբար ներառում է պատասխանողների փոքրաթիվ խմբեր, որոնք կազմվում են ոչ-հավանական ընտրանքի հիման վրա: Շատ կարևոր է նաև իմանալ, որ որակական հետազոտությունը ավելի մեկնաբանող բնույթի է, քան նկարագրողական:

Պլանավորման մեջ որակական հետազոտությունն օգտագործվում է հետևյալ նպատակներով.

- թիրախ-բնակչության կարիքները որոշելու համար
- քանակական տվյալները բացատրելու, հասկանալու համար
- գաղափարներ ծնելու համար
- քանակական գործիքների զարգացմանն օժանդակելու համար
- հաղորդակցության ռազմավարություն մշակելու համար
- միջամտություններ/ծրագրեր մշակելու համար (հատկապես՝ վարքագծի փոփոխության հասնելու համար)
- տարբեր ռազմավարություններից ծագող հավանական հիմնախնդիրները որոշելու համար
- թիրախ-բնակչության «լեզուն» և մշակութային հայեցակարգերը սովորելու համար:

Այժմ քննարկենք որակական տվյալներ հավաքելու հիմնական եղանակները: Դրանք ներառում են.

1. Դիտարկումներ (մասնակիցների դիտարկումներ, շարունակական հսկողություն՝ մոնիտորինգ, ընտրողական սրուգումներ, և այլն),
2. Նարցագրույցներ (ոչ ֆորմալ, չնախաձևված, կիսանախաձևված, նախաձևված (հարցումներ), հարցագրույցներ առանցքային տեղեկատու անձանց հետ, նպատակային խմբակային քննարկում հարցագրույցներ (focus groups), և այլն),
3. Տվյալների հավաքման համակարգված մեթոդներ (ազատ ցուցակագրում (free listing), թղթապանակային տեսակավորում (pile sorts), և այլն):

1. Դիպարկումներ

Դիպարկումները ներառում են որոշված շրջանակներում դիպելու և արձանագրելու ճանապարհով խորը, մանրամասն տեղեկությունների հավաքելը: Երբ մենք ուզում ենք տեսնել մարդկանց *իրական* վարքագիծը և ապրելակերպը, կարարում ենք դիպարկումներ: Կախված դիպարկման համար կիրառվող ռազմավարության բնույթից, դրանք կարող են լինել.

Բացահայտ - ակնհայտ և արձագանքվող (մարդիկ գիտեն, որ դուք դիպում եք նրանց),

Քողարկված - ոչ-սևեռուն և անարձագանք (մարդիկ դիպվում են՝ առանց իրենց գիտության),

Ուղղակի - (օրինակ՝ մասնակցի դիպարկումը)

Անուղղակի - (օրինակ՝ բժշկական քարտերի ուսումնասիրությունը):

Ուղղակի դիպարկումները կարող են ունենալ նախաձևվածության («կառուցվածության») փարբեր մակարդակներ.

Չնախաձևված ուղղակի դիպարկումներ. օրինակ՝ մասնակցի դիպարկումը, որը շար է օգտագործվում մարդաբանության մեջ՝ «բնօջախում» կարարվող ազգագրական աշխատանքներում (field work): Այն փալիս է «ներքին տեսակետ» և կախված է թիրախ-խմբի/պատասխանողի հետ փոխհարաբերություններ հաստատելու հաջողությունից:

Շարունակական հսկողությունը (լայնորեն կիրառվում է հոգեբանության մեջ) *ավելի նախաձևված ուղղակի դիպարկման* մի օրինակ է: Այն իրենից ներկայացնում է անձը կամ խումբը դիպելու և նրա(նց) վարքագիծը հնարավորինս ճշգրիտ արձանագրելու գործընթաց:

Ուղղակի դիպարկումների ամենա-նախաձևված տեսակը ընտրողական սրուգումներն են, որոնք հաճախ օգտագործվում են ծրագրերի գնահատման համար: Այն օգտագործվում է պատահական ընտրված պահին և տեղում դիպելու, թե ի՞նչն է արվում և ինչը՝ ոչ:

Դիպարկումները պլանավորման մեջ օգտագործվում են

- Մեզ հետաքրքրող թեմայի վերաբերյալ փարբեր վարքագծերի դրսևորման հաճախականությունն արձանագրելու համար,
- Նախորդող անձանոթ վարքագծերը (որոնք կարող են ազդել առողջական արդյունքների վրա) վեր հանելու համար,
- Որևէ վարքագիծը կաշկանդող կամ այն սատարող պայմանները վեր հանելու համար
- Մշակութային սովորությունների մասին ավելի խորացված գիտելիքներ ձեռք բերելու համար:

Դիպարկումների առավելությունները.

- համեմատաբար ավելի վստահելի են, քանի որ դիպվում են իրական վարքագծերն ու սովորությունները (ի հակադրումն «գեկուցված» կամ «պարմված» վարքագծերի):

Դիպարկումների թերությունները.

- Ժամանակավար և աշխատավար են (այսինքն՝ թանկ). կարող են պարզեցվել՝ նախաձևված դիպարկումներ օգտագործելու միջոցով
- դիպարկման համար հարմարությունների սրեղծման առումով դժվար են կազմակերպվում
- հենց դիպարկվելու փաստը կարող է դիպարկվողի վարվելակերպը փոխվելու պատճառ դառնալ
- դիպողի կանխակալությունը՝ նրա կողմից աղավաղումների հնարավորությունը (դիպողի ակնկալիքների և մեկնաբանությունների հետևանքով): Դրանից խուսափելու համար պետք է զարգացնել նկարագրելու արվեստը/ունակությունները

- բարոյագիտական (էթիկական) նկատառումներ (մասնակցի դիտարկում)

2. Խորացված հարցազրույցներ

Այսպիսի հարցազրույցները ներառում են բաց հարցեր փալը, պատասխանները լսելն ու արձանագրելը, առնչվող լրացուցիչ հարցերով հերազա պարզաբանումները՝ փորփրելը, մանրամասնություններ պահանջելը և, ի վերջո, հարցվողի տեսակետի ամբողջական պատկերացում ստանալը:

Կախված նախաձևվածության («կառուցվածության») մակարդակից, հարցազրույցները կարող են լինել

- ա) *ոչ-ֆորմալ (ոչ-պաշտոնական)* (չկա նախապես մշակված ձև՝ «կառուցվածք» կամ վերահսկողություն, խոսակցությունները պեք է հիշել և օգտագործել նոր թեմաներ բացահայտելու համար)
- բ) *չնախաձեռված* (ավելի պաշտոնական է, բայց դեռ առանց նախապես մշակված ձևի կամ վերահսկողության. մարդկանց հնարավորություն է փախա արտահայտվել իրենց բառերով)
- գ) *կիսա-նախաձեռված հարցազրույցներ* (հիմնված ուղեցույցի վրա, որը ներառում է թեմաների կամ փրվելիք հարցերի ցուցակ՝ որոշակի հերթականությամբ, հարցերը փրվում են մոտավոր ձևով)
- դ) *նախաձեռված հարցազրույցներ* (քանակական մոտեցում, հարցումներ)

Մանրամասն հարցազրույցները պլանավորման մեջ օգտագործվում են

- լավատեղյակ անձանցից բարդ նյութերի, թեմաների վերաբերյալ սպառիչ տեղեկություններ ստանալու համար,
- թիրախ-բնակչության գիտելիքները, վերաբերմունքը, կարծիքները և սովորություններն ուսումնասիրելու համար (հատկապես երբ հարցը վերաբերում է «զգայուն» թեմաների),
- բարդ վարքագծերն ու շարժառիթները հերաքննելու համար :

Առավելություններ.

- տեղեկատվությունը որակի առումով շատ հարուստ է լինում,
- փոխազդեցիկ է (ինտերակտիվ), հերաքրքրության դաշտերն ավելի խորը կարող են ուսումնասիրվել կրկնակի հարցազրույցների միջոցով,
- կարող է ուսումնասիրել «զգայուն» թեմաներ
- աշխարհագրորեն սփռված բնակչության դեպքում ավելի նպատակահարմար է, քան նպատակային քննարկումները (այդ մասին կանդրադառնանք քիչ անց):

Թերություններ

- պահանջում է բարձրահմուտ հարցազրույց վարողներ,
- ժամանակապար է,
- արդյունքները ընդհանրացման ենթակա չեն,
- հարցազրույց վարողի հսկողությունը հարցազրույցի տեղի (միջավայրի) վրա սահմանափակ է
- հարցազրույցի արդյունքում կարող է սրացվել մեծաքանակ ավելորդ տեղեկատվություն,
- սրացված փվյալները միշտ չէ, որ ճշգրիտ են (մեծապես կրում են հարցվողի տեսակետների ու մտքերի ազդեցությունը):

Այլ նկատառումներ, որոնք պեք է հաշվի առնել

- հարցազրույցը վարողի վարվելակերպը, վարքագիծը վճռորոշ նշանակություն ունեն հարցազրույցների վարման և տեղեկության վերլուծության հաջողության հարցում, այս ձևն օգտագործելիս՝ ծայրաստիճան կարևոր է վարողի պատրաստումը (ուսուցանումը)
- Կրթականը կարող են խառնաշփոթ լինել, և նախքան հարցազրույցների սկսելը պետք է ունենալ կրթական մշակման որոշակի պլան:

Առանցքային տեղեկատու անձանց հարցազրույցները խորացված հարցազրույցների մի տեսակ են: Այն իրենից ներկայացնում է կրթական ոլորտում մասնագիտացված անձանց հետ (սովորաբար՝ 6-8 հոգի) հարցազրույց անցկացնելը: Առհասարակ, առանցքային տեղեկատու անձանց հարցազրույցներից սպասվում է մեզ հետաքրքրող արժեքավոր տեղեկություն:

Խորացված հարցազրույցի մի այլ տեսակ է *նպատակային քննարկումը* (focus group): Սա խմբային հարցազրույց է, որն օգտագործվում է մասնակիցների փորձի, վերաբերմունքի, կարծիքների, համոզմունքների մասին մանրամասն տեղեկություն ստանալու համար: Որոշակի թեմայի շուրջ փոքրաթիվ մարդկանց խմբի (6-8 հոգի) հետ հարցազրույցը վարում է բազմահմուտ մի համադրող: Քննարկումները գրանցվում կամ ձայնագրվում են: Այս փափ հարցազրույցներն անցկացվում են խմբային քննարկումների միջոցով խմբի «ներսից» մարդկանց պարկերացումները ստանալու և խմբային պրոցեսով խթանված հարուստ տեղեկատվություն հավաքելու համար: Խմբակային քննարկում-հարցազրույցների համար օգտագործվում են կիսա-նախաձևված հարցազրույցների մոտեցումը: Սովորաբար խմբակային քննարկումներից հետո տեղի է ունենում մարքերի ամփոփում (debriefing), որի ընթացքում համադրողը, արձանագրողը և դիտորդները (եթե վերջիններս նույնպես ներկա էին) քննարկում են մասնակից(ներ)ի հարկանիշները, նրանց խանդավառության աստիճանը, մասնակիցների մեկնաբանությունների և արձանագրված վարքագծերի համատեղելիությունը, նրանց ժեստերը և փրոդ ընդհանուր տրամադրությունը: Նրանք նաև ուշադրություն են դարձնում հարցադրումների, դրանց ձևի մեջ եղած փոփոխություններին, քննարկման ընթացքում ի հայտ եկած նոր թեմաներին, ենթաթեմաներին, և որոշումներ են կայացնում խմբային հետագա քննարկումների ժամանակ օգտագործվելիք հարցման նոր մոտեցումների վերաբերյալ: Նախնական արձանագրությունները՝ ներառյալ մարքերի ամփոփումը, օգտագործվում են նպատակային խմբերի վերլուծություններում և ամփոփիչ գեկույցի պատրաստման համար:

Նպատակային քննարկումները պլանավորման մեջ օգտագործվում են.

- Նիմնախնդիրները որոշելու և սահմանելու համար,
- Ծրագրի կամ նախագծի վերաբերյալ նոր գաղափարներ ստանալու համար,
- Ծրագրում օգտագործվող նյութերը գնահատելու համար,
- Մեկնակերպային հարցումներին օժանդակելու (հարցերի ձևավորում, նախնական թեստավորում, հաստատող կրթականի ստացում) համար
- Որոշակի թեմայի շուրջը փոխհամաձայնության աստիճանը պարզելու համար:

Առավելություններ.

- Քիչ ծախսատար են (հավանականորեն)
- Խմբային շփումները կարող են խթանել հարուստ, բովանդակալից պատասխանները և պարզել, փարատել հակադիր կարծիքները:

Թերություններ

- Ննարավոր չէ ապահովել գաղտնիությունը (բարոյագիտական մրավախություններ),
- պայմաններ ստեղծելու առումով խումբ հավաքելը առավել բարդ է,
- պահանջվում է հնուր վարող,
- հարցերի քանակը, որոնք կարող են տրվել, սահմանափակ է:

Այլ նկատարումներ, որոնք պետք է հաշվի առնել

- խմբակային քննարկման առաջնային նպատակը տեղեկատվություն հավաքելն է, և ոչ թե հակասությունները վերացնելը, փոխհամաձայնություն հաստատելը, հաղորդակցությունը բարելավելը, դիրքորոշումները փոխելը կամ որոշումներ ընդունելը,
- վիճակագրական տվյալների անհրաժեշտության դեպքում պետք չէ դիմել խմբակային քննարկումներին:

Այժմ, քանի որ ունենք ընդհանուր պարկերացում իրավիճակի վերլուծության համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքման ձևերի վերաբերյալ, անցնենք առողջապահական ընդհանուր մոդելի պլանավորման հաջորդ փուլին՝ նպատակների, առաջնահերթությունների, խնդիրների ճշգրտում և ռազմավարության գնահատում:

Նարցեր

1. Որակական հետազոտությունն իրականացվում է՝ պատասխանելու համար «քանի՞ հար» և «որքա՞ն հաճախ» հարցերին:

Ճիշտ Մխալ

Պատասխան՝ Մխալ: Տես էջ 1

2. Ընտրել ամենաքիչ նախաձևված դիտարկման տեսակը (ստորև թվարկածից)

- ա) Մասնակցի դիտարկում
- բ) Ընտրողական սպուգումներ
- գ) Շարունակական հսկողություն

Պատասխան՝ ա) Մասնակցի դիտարկում: Տես էջ 2

3. Գիտորդի կանխակալությունը, նրա կողմից թույլ տրվող աղավաղումները դիտորդի ակնկալիքների և մեկնաբանությունների հետևանքն են

Ճիշտ Մխալ

Պատասխան՝ Ճիշտ: Տես էջ 2

4. Խորացված հարցազրույցները ներառում են բաց հարցեր տալը, պատասխանները լսելն ու արձանագրելը, առնչվող հավելյալ հարցերով հետապնդելը:

Ճիշտ Մխալ

Պատասխան՝ Ճիշտ: Տես էջ 3

5. Սովորաբար քանի՞ հոգի է մասնակցում նպատակային քննարկումներին:

- ա) 1-3 մարդ
- բ) 3-6 մարդ
- գ) 6-8 մարդ

դ) 10-20 մարդ

Պարասխան՝ գ) 6-8 մարդ: Տես էջ 4